

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Ամսաթիվ՝ 14 օգոստոսի 2015թ.

Վարկի համարը՝ 2993 – ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3

Պայմանագրի համարը և անվանումը՝ N 03-LIC-001 – ՀՕՏԾ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 14 սեպտեմբերի 2015թ.

Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ) համաձայնել է իր Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությանը տրամադրել 500 միլիոն ԱՄՆ դոլար «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման համար:

Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար արդեն մշակվել է Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏԾ), իսկ ներկայումս նախապատրաստական փուլում է գտնվում Լանջիկ-Գյումրի հատվածի համար նախատեսված ՀՕՏԾ-ն՝ հետևելով Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏԾ)՝ սույն ԲՖԳ-ի համար վերանայված տարրերակին ու ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականության» փաստաթղթի (ADB SPS 2009) պահանջներին, հիմք ընդունելով ճանապարհի մանրամասն նախագիծը: ՀՕՏԾ-երը ապահովում են Տրանշ 3-ի Ծրագրի ազդեցությունների ու արժեքների գնահատումը և Ծրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) և ազդեցության ենթակա տնային տնտեսություններին (ԱԵՏՏ) Հողերի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) վերականգնողական միջոցառումների և փոխհատուցումների փոխանցման համար նախատեսված գործողությունների մանրամասն ծրագիրը: Հիմք ընդունելով ՀՕՏ գնահատումը՝ Ծրագիրը մշտական հիմունքներով կօտարի ընդհանուր թվով 1014 հողամաս, որոնցից 348-ը՝ Թալին-Լանջիկ հատվածում (224 մասնավոր հողեր, 332 ԱԵՏՏ) և 666-ը՝ Լանջիկ-Գյումրի հատվածում (345 մասնավոր հողեր, 532 ԱԵՏՏ)՝ ընդհանուր առմամբ ազդեցության ենթարկելով թվով 12 համայնքի 864 ԱԵՏՏ-ի 4236 ԱԵԱ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) Ծրագրի գործադիր մարմինն է (ԳՄ), իսկ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԾԻԿ)՝ Ծրագրի Իրականացնող գործակալությունը (ԻԳ): ՀՕՏԻ իրականացման և դրանից բխող աջակցության ծրագրի կենսագործման նպատակով ԾԻԿ-ի կողմից հիմնվել է Իրավական և արտաքին ազդեցության թիմ (այսուհետ՝ Վերաբնակեցման համակարգող թիմ՝ ՎՀԹ)՝ կազմված թվով 5 մասնագետից:

Հետաքրքրության հայտի ներկայացման սույն հրավերն առնչվում է Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների համար նախատեսված ՀՕՏԻ կենսագործման նպատակով Իրականացնող կազմակերպության (այսուհետ՝ ԻԿ) ընտրությանը՝ հիմնվելով ՀՕՏԻ կից որպես հավելված ներկայացված Տեխնիկական առաջադրանքի վրա:

Ծառայությունների մատուցման ավարտին ԻԿ-ից ակնկալվող հիմնական արդյունքներն են ազդեցության ենթակա հողերի ձեռքբերումը՝ օտարման պայմանագրերի կնքմամբ կամ դատական կարգով, և օտարման արդյունքում իրավունքների պետական գրանցման գործընթացի իրականացմամբ՝ ԾԻԿ-ին Հայաստանի Հանրապետության անունով իրավունքի պետական գրանցման վկայականների հանձնմամբ:

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ

1. ՀՕՏԻ իրականացման համար ԻԿ հիմնական նպատակները և գործառույթների շրջանակը հետևյալն են.

(ա) ԻԿ-ը կգործի որպես կապող օղակ ԾԻԿ-ի և ԱԵԱ-ների միջև և պատասխանատու կլինի ապահովելու Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԻ-ների ամբողջական իրականացումը, ներառյալ դատական կարգով օտարման փուլը՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների,

- (բ) Ապահովել ՀՕՏԾ-ների ներքո սահմանված Օրինականացման/ուղղման և վերականգնման պլանների լիարժեք իրականացումը,
 - (գ) Ապահովել ԱԵԱ-ների և նրանց բիզնեսների սահուն տեղափոխումը,
 - (դ) Աջակցել ՄՏՀԱ-ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ Տարաբնակեցման քաղաքականությանը և իրավունքների փաթեթներին ծանոթացնելու նպատակով,
 - (ե) ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին տրամադրել խորհրդատվություն և գիտելիքներ՝ ՀՕՏԾ ներքո իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,
 - (զ) Ապահովել ԱԵԱ/ԱԵՏՏ-ների կողմից ՀՕՏԾ ներքո իրենց իրավունքների լիարժեք իրականացումը: Այնտեղ, որտեղ կան տարբերակներ, ԻԿ-ը պետք է ԱԵԱ/ԱԵՏՏ-ներին տրամադրի խորհրդատվություն յուրաքանչյուր տարբերակի հարակից օգուտների/նպաստների վերաբերյալ և կապի ԱԵԱ-ներին համապատասխան գրադրվածության, ինքնագրադրվածության, վերապատրաստման և այլ ծրագրերին (ինչպես սահմանված է ՀՕՏԾ-ներքո),
 - (է) Աջակցել ԱԵԱ-ին իրենց բողոքները/խնդիրները ՀՕՏԾ ներքո հաստատված Բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) միջոցով կարգավորելու համար, և հետամուտ լինելու իրենց բողոքների լուծմանը՝ համահունչ միջոցառումների իրականացմամբ,
 - (ը) Ապահովել անհրաժեշտ տեղեկատվության/տվյալների հասանելիությունը Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) համար՝ ՀՕՏԾ իրականացման Համապատասխանության հաշվետվության պատրաստման համար և ապահովել բոլոր Ճշգրտող միջոցառումների պատշաճ իրականացումը (եթե այդպիսիքն լինեն), որոնք կսահմանավեն ԱՄԳ կողմից:
 - (թ) Ապահովել ՀՕՏԾ-ով նախատեսված ազդակիր հողերի (մոտ 300 միավոր) չափագրումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և տրամադրել սահմանված ձևի հատակագծեր,
 - (ժ) ապահովել ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողամասերի տեղազենումը և դրանց նկարագրության արձանագրությունների կազմումը և ստորագրումը կառավարության սահմանված կարգով և ժամկետներում,
 - (հ) օտարման ենթակա գույքի փոխհատուցման նպատակով ապահովել ազդակիր հողամասերի, դրան ամրակցված շենք, շինությունների, առկա բարելավումների գնահատումը և ՀՕՏԾ-ով նախատեսված օժանդակությունների հաշվարկումը՝ ՀՕՏԾ-ի, ՀՀ օրենսդրության, գնահատման ստանդարտների, ՀՕՏԾ գնահատման մեթոդաբանության հիման վրա,
 - (լ) իրականացնել մարդահամար (ներառյալ պահանջվող փաստաթղթերի հավաքագրում) և սոցիալ-տնտեսական հետազոտություն, ստուգման գործողությունների իրականացում (եթե անհրաժեշտ է):
2. Աշխատանքները սկսելուց առաջ ԻԿ-ն պետք է պատրաստի Մանրամասն գործողությունների պլան (ՄԳՊ), որտեղ նկարագրված կլինեն յուրաքանչյուր ՀՕՏԾ ենթահատվածի իրականացման փուլի (այդ թվում և օրինականացման պլանի) համար կիրառվող բոլոր մեթոդաբանությունները, գործողություններն ու ժամանակացույցերը՝ ԾԻԿ-ի հետ խորհրդատվությունների հիման վրա:
 3. ՀՕՏԾ իրականացման ընթացքում ԻԿ-ը պետք է ղեկավարվի «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 16.09.2010թ. թիվ 1274-Ն որոշման (ՀՕՏԾ), ԱԶԲ Անվտանգության քաղաքականության փաստաթղթի (ADB SPS 2009), ՀՀ կառավարության կողմից հաստատված Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածների ՀՕՏԾ-ներով, ինչպես նաև գործընթացին առնչվող այլ իրավական ակտերի պահանջներով:
 4. Բացի ՀՕՏԾ-ների իրականացումից, ԻԿ-ն պետք է ապահովի նաև լրացուցիչ օտարումների պլանի (ՀՕՏԾԼ) և փոփոխությունների գործողությունների պլանի (ՓԳՊ) իրականացումը:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԹԻՄԻ ԿԱԶՄԸ

1. Իր առջև դրված առաջադրանքների կատարման նպատակով, ԻԿ-ն պետք է ներգրավի երկու հիմնական աշխատանքային թիմեր: 1-ին թիմը պատասխանատու կլինի ՀՕՏԾ-երի ամբողջական իրականացման, իսկ 2-րդ թիմը՝ ՓԳՊ և ՀՕՏԸ, պլաններով նախատեսված աշխատանքների իրականացման համար: ԻԿ-ն պետք է ունենա համապատասխան փորձ՝ հողային հարաբերությունների (հողերի օտարման, կադաստրային ձևակերպումների փորձն առավելություն է) հետ կապված ոլորտներում, ապրուստի ու եկամուտների ստեղծման և դրանց վերաբերյալ վերապատրաստման, սոցիալ-տնտեսական հետազոտությունների, վերաբնակեցման և կենսաապահովման վերականգնման, շահառու կողմերի և համայնքային մասնակցությամբ զարգացման ծրագրերի, ենթակառուցվածքների զարգացման (ցանկալի է ճանապարհաշինության ոլորտի) ծրագրերի, գենդերային հարցերին առընչվող ոլորտի, անշարժ գույքի գնահատման, չափագրման կամ առնչվող այլ ոլորտներում: ԻԿ հիմնական մասնագետները կաշխատեն դաշտում՝ ԹԻՄի ղեկավարի վերահսկման ներքո:
2. ԻԿ-ը պետք է ներգրավի աշխատանքային թիմեր՝ կազմված փորձառու մասնագետներից, որոնք կիրականացնեն սույն առաջադրանքը:
3. Իրականացման Կազմակերպության աշխատանքային թիմերի (այսուհետ՝ Իրականացման Թիմ-ԻԹ) կառուցվածքը ենթադրում է հետևյալ կազմը.

ՀՕՏ գծով աշխատանքների իրականացման թիմ (կառուցվածք, գործառույթներ, հիմնական փորձագետների որակավորում)

ՀՕՏ գծով աշխատանքներն իրականացնող թիմի հիմնական գործառույթներն են ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված հողերի օտարումների իրականացումը՝ պայմանագրային և դատական կարգով, փոխհատուցումների տրամադրման գործընթացի սահուն իրականացումը, ձեռքբերված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ապահովումը և ԻԿ տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ առաջադրանքների լիարժեք իրականացումը:

ՀՕՏ գծով աշխատանքների իրականացման թիմը ենթադրում է հետևյալ մասնագետների ներգրավումը՝

1. ԻԹ ղեկավար
2. Համակարգողներ
3. Իրավախորհրդատու/փաստաբան(ներ)
4. Դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետ(ներ)
5. Սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետ
6. Տվյալների բազայի մասնագետ/ծրագրավորող

ԻԹ ղեկավարը

- ա. Համակարգում է ամբողջ թիմի գործունեությունը,
- բ. Համակարգողների միջոցով իրականացնում է ԻԹ անդամների միջև աշխատանքի բաժանումը,
- գ. ԾԻԿ-ի հետ համաձայնեցված կարգով պլանավորում և վերահսկում է ՀՕՏԾ ողջ գործընթացը,
- դ. ԻԿ կողմից ապահովում է ԻԿ և ԾԻԿ փոխգործակցությունը, գործընթացին ներգրավված տարբեր պետական, համայնքային և այլ մարմինների հետ համագործացությունը, ըստ անհրաժեշտության կազմակերպում է քննարկումներ և հանդիպումներ, ԾԻԿ-ի հանձնարարությամբ հանդես է գալիս վերջինիս անունից նշված մարմինների հետ հարաբերություններում,

1 Եթե տվյալների բազայի մասնագետը չի կարողանում իրականացնել պահանջվող ծրագրավորողի գործառույթները, ապա ծրագրավորողը կարող է վարձվել ժամանակավոր, ըստ անհրաժեշտության՝ չլինելով իրականացնող թիմի մշտական անդամ: Տվյալների բազայի կառավարման մասնագետը պետք է աշխատի ողջ աշխատանքային օրով:

- ե. Շաբաթական կտրվածքով ԾԻԿ-ին ներկայացնում է ամփոփ հաշվետվություն ՀՕՏ՝ աշխատանքների առաջընթացի վերաբերյալ, ընթացիկ ամփոփ տվյալներ, տեղեկանքներ և տեղեկություններ, իրականացված կադաստրային և նոտարական գործարքների ցանկերը համապատասխան ծախսերով, բարձրացնում և քննարկում է ՀՕՏ՝ իրականացման ընթացքում հանդիպող խոչընդոտները և խնդրահարույց դեպքերը և դրանց լուծման հնարավոր մեխանիզմները,
- զ. Ամսական կտրվածքով ԾԻԿ-ին է հանձնում օտարման պայմանագրերով ծագող ՀՀ սեփականության իրավունքի պետական գրանցման նոր վկայականները, համապատասխան ակտերի միջոցով,
- է. ԻԿ անունից ԾԻԿ-ին ներկայացնում է Տեխնիկական առաջադրանքով սահմանված ընթացիկ և փուլային հաշվետվություններ:

Համակարգողներ

- ա. Համակարգում են իրականացնող դաշտային թիմերի գործունեությունը,
- բ. Իրականացնում են դաշտային թիմերի անդամների միջև աշխատանքի բաժանումը,
- գ. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին ԻԹ՝ ղեկավարին են ներկայացնում ամփոփ տեղեկություն ՀՕՏ՝ աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ընթացիկ ամփոփ տվյալներ, տեղեկանքներ և տեղեկություններ, իրականացված կադաստրային և նոտարական գործարքների ցանկերը համապատասխան ծախսերով, վերհանում և քննարկում է ՀՕՏ՝ իրականացման ընթացքում հանդիպող խոչընդոտները և խնդրահարույց դեպքերը և դրանց լուծման հնարավոր մեխանիզմները,
- դ. Համակարգում են դաշտային աշխատանքների արդյունքում հավաքված տվյալների, իրականացված գործողությունների ընթացքի/կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության հանձնումը տեղեկատվական բազայի մասնագետին՝ միտված նախապես համաձայնեցված ձևաչափով ՀՕՏ՝ բազայում մուտքագրմանը և մշակմանը,
- ե. Համակարգում են դաշտային աշխատանքներ իրականացնող թիմի և տվյալների բազայի մասնագետի միջև փոխանակվող տվյալների ամփոփումը և վերստուգումը,
- զ. Աջակցում են ԻԹ՝ ղեկավարին ԻԹ՝ կողմից ԾԻԿ-ին ներկայացվող հաշվետվությունների կազմմանը:

Իրավաբաններ/ Փաստաբան(ներ)

- ա. Տրամադրում են իրավական խորհրդատվություն ՀՕՏ՝ իրականացման հարցերում, այդ թվում օտարման պայմանագրերի կնքման և իրավունքների պետական գրանցման հարցերում,
- բ. Իրականացնում են յուրաքանչյուր դատական գործի վարման համար հայցերի նախապատրաստումը,
- գ. ՀՕՏ՝ շրջանակներում ներկայացնում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի շահերը և դրանց պաշտպանության նպատակով իրականացում է փաստաբանական գործունեություն՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, ներառյալ՝ որպես ԾԻԿ-ի ներկայացուցիչ դատարաններում հանդես է գալ որպես հայցվոր և/կամ պատասխանող (որտեղ անհրաժեշտ է)այդ թվում՝ ա) ստորագրում և ներկայացնում է դիմումներ, հայցադիմումներ, բ) կնքում է հաշտության համաձայնություն, գ) բողոքարկում է դատական ակտը, ներկայացնում է վերաքննիչ բողոքներ, վերաքննիչ բողոքների պատասխաններ, ներկայացնում է վճռաբեկ բողոքներ և վճռաբեկ բողոքների պատասխաններ, դ) ինչպես նաև կատարում է անհրաժեշտ այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են ՀՕՏ՝ պատշաճ իրականացման համար:
- դ. Կազմակերպում են յուրաքանչյուր դատական գործի վարման համար լրացուցիչ փաստաթղթերի (ապացույցների) ձեռքբերումը, կազմումը և այլն,
- ե. Ապահովում են վճիռների կատարման ընթացքը և վճիռներից բխող գույքային իրավունքների պետական գրացումը,
- զ. Իրականացնում են դատական հայցերի վարման շրջանակներում այլ անհրաժեշտ գործառույթներ,
- է. ԻԹ՝ ղեկավարին են ներկայացնում քանակական և նկարագրողական հաշվետվություններ՝ աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Դաշտային աշխատանքներ իրականացնող մասնագետներ

- ա. Ապահովում են ԱԵԱ-ների պատշաճ խորհրդատվությունը ՀՕՏՕ ներքո իրենց իրավունքների, փոխհատուցումների ստացման և այլ հարցերի վերաբերյալ,
- բ. Օգնում են ԱԵԱ-ներին առկա խնդիրները Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար՝ ՀՕՏՕ Բողոքների լուծման մեխանիզմով սահմանված կարգով,
- գ. Աջակցում և կազմակերպում են ԱԵԱ-ների օրինականացման, թերի փաստաթղթերի կարգավորման, կադաստրային ուղղումների գործընթացները,
- դ. Իրականացնում են օտարման պայմանագրերի կնքման նպատակով անհրաժեշտ համագործակցությունը ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ԱԳԿ ՊԿ) համապատասխան ստորաբաժանումների և նոտարական գրասենյակների հետ,
- ե. Կազմակերպում և իրականացնում են հողերի օտարման պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը ԱԵԱ-ների հետ, ապահովում են նոտարական կարգով դրանց վավերացումը,
- զ. Աջակցում են ԱԵԱ-ներին փոխհատուցում ստանալու հարցում (ներառյալ վերականգնման օժանդակությունները),
- է. Հողերի օտարվող մասերի բաժանման և միասնական տեղեկանքների ստացման հետ կապված խնդիրների դեպքում (կադաստրի կողմից դիմումների կասեցում, դադարեցում և այլն) իրականացնում են խնդիրների ուսումնասիրությունը ԾԻԿ-ի և անհրաժեշտ այլ շահագրգիռ կողմերի հետ,
- ը. Աջակցում են օտարման պայմանագրերի, համաձայնագրերի կնքմանը, օտարվող սեփականության նկատմամբ իրավունքների պետական գրանցմանն ուղղված ցանկացած իրավաբանական և այլ գործողությունների իրականացմանը,
- թ. Ապահովում են փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելու, գումարը ԱԵԱ-ների կողմից ստանալու, այդ թվում ԱԵԱ-ների համար հաշվեհամարների բացման գործընթացի ընթացքում առաջացած իրավական խնդիրների լուծումը,
- ժ. Աջակցում են փաստաբաններին դատական հայցերի կազմման և դատական հայցերի վարման գործընթացում,
- ի. ԻԹ դեկավարին են ներկայացնում աշխատանքների ընթացքի վերաբերյալ քանակական և նկարագրողական հաշվետվություններ:

Սոցիոլոգ/սոցիալական գարգացման մասնագետ(ներ)

- ա. Ապահովում են ԱԵԱ-ների պատշաճ իրազեկման և ծանուցման գործընթացը, տարածում են ՀՕՏՕ շրջանակներում մշակված տեղեկատվական ձեռնարկներն ու նյութերը,
- բ. Աջակցում են ԾԻԿ-ին նախաձեռնելու հանրային իրազեկման արշավներ ազդեցության ենթակա համայնքներում՝ վերաբնակեցման քաղաքականությանը և փոխհատուցման գումարների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով,
- գ. Իրականացնում են ԱԵԱ-ների վերաբերյալ տվյալների համապարփակ վերստուգումն ու թարմացումը բոլոր հողամասերի մասով՝ ԱԵԱ-ների հետ հանդիպումների միջոցով,
- դ. Ապահովում են անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ձեռքբերումը, ստացումը, հանձնումն ըստ պատկանելության, դաշտից հավաքված տվյալների, իրականացված գործողությունների ընթացքի վերաբերյալ տվյալների հանձնումը բազայի մասնագետին՝ ՀՕՏՕ բազայում մուտքագրման ու հետագա մշակման համար,
- ե. Իրավաբանների հետ միասին օգնում են ԱԵԱ-ներին առկա խնդիրները Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կարգավորելու համար,
- զ. Իրավաբանների հետ միասին իրականացնում են ՀՕՏՕ շրջանակներում օրինականացման, կադաստրային ուղղման գործընթացները՝ ապահովելով ԱԵԱ-ների պատճառ իրազեկումն ու խորհրդատվությունը,
- է. Աջակցում են ԱԵԱ-ներին ազդեցության ենթակա հողերի բաժանման և դրանց պետական գրանցման հարցերում, իրականացնում են նշված գործընթացի ընդհանուր կազմակերպումը, ինչպես նաև օտարվող անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքների և այլ անհրաժեշտ տեղեկատվության ստացման գործընթացը ԱԳԿ ՊԿ տարածքային ստորաբաժանման գրասենյակներում,

ը. Հողերի մասնատման և միասնական տեղեկանքների ստացման հետ կապված խնդիրների դեպքում (կադաստրի կողմից դիմումների կասեցում, դադարեցում և այլն) իրականացնում են խնդիրների ուսումնասիրությունը ԾԻԿ-ի և անհրաժեշտ այլ շահագրգիռ կողմերի հետ,
թ. Աջակցում են ԱԵԱ-ներին օտարման պայմանագրերի/համաձայնագրերի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու, ճշգրտելու և կազմելու հարցում,
ժ. Ապահովում են ԱԵԱ-ների փոխհատուցման ստացման գործընթացը,
ի. Աջակցում են իրավաբաններին ՀՕՏԾ շրջանակներում իրավունքի պետական գրանցման գործընթացը կազմակերպելու հարցում,
լ. ԻԹ ղեկավարին են ներկայացնում են աշխատանքների ընթացքի վերաբերյալ քանակական և նկարագրողական հաշվետվություններ:

Տեղեկատվության և բազաների պատասխանատու/ծրագրավորող

ա. Կազմակերպում և իրականացնում է ՀՕՏԾ բազայի (MSSQL) շարունակական ծրագրային զարգացումը (բազայի արխիվացման հնարավորություն, տարբեր մակարդակների մուտքերի ծրագրավորում, նոր փոփոխականների ներմուծում, նոր հարցումների և հաշվետվությունների ստացում և այլն) ՀՕՏԾ իրականացման յուրաքանչյուր փուլի պահանջների համաձայն՝ ԾԻԿ մասնագետների հետ քննարկման և համաձայնեցման միջոցով,
բ. Ապահովում է ՀՕՏԾ տվյալների բազայում առկա տեղեկատվության ստուգումը յուրաքանչյուր ԱԵԱ-ի համար կազմված թղթային հաշվետվությունների փաթեթների տվյալների հետ (նկարագրության արձանագրություն, գնահատման հավետվություն, լրացուցիչ փաստաթղթեր/ակտեր/տեղեկանքներ)՝ ապահովելով վերստուգված տվյալների, ինչպես նաև իրականացման գործընթացի տարբեր փուլերի ընթացքի վերաբերյալ տվյալների մուտքագրումն ու թարմացումը բազայում,
գ. Ապահովում է ԱԵԱ-ների վերաբերյալ ՀՕՏԾ ներքո հավաքագրված տվյալների (օտարման պայմաններ, փոխհատուցման տվյալներ և այլն) տրամադրումը ԻԹ մյուս մասնագետներին՝ վերստուգելու, թարմացնելու և կիրառելու նպատակով,
դ. Ապահովում է բազայում առկա տվյալների հիման վրա հանրային իրազեկման արշավների համար նախատեսված տեղեկատվական նյութերի կազմումը և ստացումը ԾԻԿ-ի հետ նախապես համաձայնեցված ձևաչափով,
ե. ՀՕՏԾ իրականացման տարբեր փուլերում բազայում առկա տվյալների հիման վրա ապահովում է ԱԵԱ-ների ծանուցման նամակների/նյութերի, օտարման պայմանագրերի/համաձայնագրերի ծրագրային ստացումը ԾԻԿ-ի կողմից նախապես սահմանված ձևաչափով,
զ. ԻԹ մասնագետների, ԾԻԿ մասնագետների և խորհրդատուների պահանջով բազայում առկա տվյալների հիման վրա կազմում և տրամադրում է ԱԵԱ-ների տվյալների, ՀՕՏԾ իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվական ամփոփ նյութեր, տվյալներ, մոնիթորինգի քանակական աղյուսակներ ԾԻԿ-ի կողմից սահմանված ձևաչափով,
է. ԾԻԿ-ի հետ նախապես համաձայնեցնելով՝ սահմանում և կազմակերպում է ՀՕՏԾ իրականացման գործընթացում ներգրավված տարբեր մասնագետների/խորհրդատուների՝ ՀՕՏԾ բազայի օգտագործման համար մուտքի տարբերակված մակարդակները՝ միաժամանակ ապահովելով նրանց պատշաճ վերապատրաստումը,
ը. ՀՕՏԾ իրականացման ավարտին ապահովում է ՀՕՏԾ իրականացման ընթացքի և արդյունքերի վերաբերյալ մշտադիտարկման ամփոփ տվյալների, քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության ստացումը, աջակցում է ԾԻԿ մասնագետներին և արտաքին մշտադիտարկման գործակալության մասնագետներին ստանալ պահանջվող մշտադիտարկման տվյալները բազայի միջոցով,
թ. ԻԹ ղեկավարին ներկայացնում է սույն Տեխնիկական առաջադրանքով սահմանված ընթացիկ քանակական հաշվետվություններ,
ժ. Ապահովում է բազայի web-based օգտագործումը՝ ԾԻԿ ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետի հետ համաձայնեցված կարգով,

ի. ԾԻԿ-ին և ԻԹ ղեկավարին ներկայացնում է առաջարկներ տվյալների բազայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ այն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

Թիմի հիմնական փորձագետների որակավորմանն առաջադրվող պահանջներն են՝

Թիմի ղեկավար. Թիմի ղեկավարը պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակագիտության, տնտեսագիտության, վիճակագրության, ֆինանսների, իրավագիտության կամ հարակից ոլորտներում՝ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով: Բազմաֆունկցիոնալ թիմի կառավարման և համակարգման ոլորտում փորձը պարտադիր է: Նա պետք է կառավարի Իրականացման թիմը և պատասխանատու լինի ընդհանուր առաջադրանքների կատարման համար: Թիմի ղեկավարը պետք է ունենա լավ աշխատանքային գիտելիքներ ՀՀ-ում հողերի օտարման, հողային, տեղական ինքնակառավարման, կադաստրային ոլորտների վերաբերյալ (Հողերի օտարմանը և տարարնակեցմանը (ՀՕՏ) վերաբերվող փորձը, ներառյալ ՀՕՏԾ-երի պատրաստման և իրականացման ինստիտուտին և ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009) առնչվող գիտելիքների առկայությունը նախընտրելի է): Պահանջվում է անգլերեն լեզվի գրավոր և բանավոր իմացություն:

Իրավաբան/փաստաբան. Իրավաբանը պետք է ունենա բակալավրի աստիճան իրավագիտության ոլորտում՝ նախընտրելի 4 տարվա մասնագիտական փորձով: Նա պետք է պատասխանատու լինի ՀՕՏԾ իրականացման ընթացքում ինստիտուցիոնալ, իրավական խնդիրների և դատական գործընթացների վարման համար: Իրավաբանը պետք է ունենա մասնագիտական գիտելիքներ՝ ՀՀ-ում հասարակության և պետության կարիքների համար հողերի օտարման, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, ՀՀ քաղաքացիական, ՀՀ հողային օրենսդրության վերաբերյալ: (ՀՕՏԾ-երի պատրաստման և իրականացման ինստիտուտներին առնչվող գիտելիքների և ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009) վերաբերյալ գիտելիքների առկայությունը նախընտրելի է):

Առաջադրանքի արդյունքներ. Առաջադրանքի արդյունքներով ԻԿ-ն պետք է ԾԻԿ-ին տրամադրի եռամսյակային և ենթահատվածների ավարտական հաշվետվություններ, կցելով ձեռքբերված հողամասերի օտարման պայմանագրերը, օտարման վերաբերյալ կայացված դատական ակտերը և ձեռքբերված գույքի իրավունքի պետական գրանցման վկայականները և այլն:

ՓԳՊ և ՀՕՏԾԼ աշխատանքների իրականացման թիմ (կառուցվածք, գործառույթներ, հիմնական փորձագետների որակավորում)

ՓԳՊ և ՀՕՏԾԼ-ի իրականացնելիս ԻԿ համապատասխան թիմը պետք է ապահովի հետևյալ հիմնական գործառույթները՝ ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ազդակիր հողերի (մոտ 300 միավոր) չափագրումը և տեղազննումը, նկարագրության արձանագրությունների կազմումը և ստորագրումը, մարդահամար (ներառյալ փաստաթղթերի հավաքագրում) և սոցիալ-տնտեսական հետազոտություն, ստուգման գործողությունների իրականացումը (եթե անհրաժեշտ է), ազդակիր անշարժ գույքի գնահատումը:

Առաջադրանքի արդյունքներ. ՓԳՊ և ՀՕՏԾԼ առաջադրանքի գծով ԻԿ-ն պետք է ԾԻԿ-ին տրամադրի բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված և օտարման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար փոխհատուցման ամբողջական փաթեթ (էլեկտրոնային և թղթային տարբերակներով), որն իր մեջ ներառում է.

- Օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունները, կից փաստաթղթերով,
- Յուրաքանչյուր հողի համար սահմանված ձևի հատակագծերը (նաև սկավառակներով)՝ հողամասի ընդհանուր և բաժանվող մասերի, առկա շենք, շինությունների համար, ներառյալ վարձակալված հողերի համար առանձին հատակագծերը,
- Օտարման ենթակա յուրաքանչյուր սեփականության գնահատման հաշվետվությունը և հաշվարկները՝ կազմված ՀՕՏԻ իրավունքների սխեմայի փոխհատուցման իրավունքների և ՀՕՏԻ գնահատման մեթոդաբանության հիման վրա,

- Հողամասերում առկա ծառերի, մշակաբույսերի տեղազննման թերթիկները, ծառերի տարիքի և այլ պահանջվող չափորոշիչների նկարագրումով (կազմվում է գյուղատնտեսի կողմից),
- Մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության արդյունքում լրացված հարցաթերթեր,
- ՀՀ օրենսդրության պահանջներից բխող այլ փաստթղթեր:

Միաժամանակ, ԻԿ-ն պետք է ԾԻԿ-ին տրամադրի իրականացված աշխատանքների արդյունքում հավաքված բոլոր տվյալների մուտքագրված բազա՝ ԾԻԿ-ի հետ համաձայնեցված ձևաչափով:

ՓԳՊ և ՀՕՏԸ իրականացումը ենթադրում է հետևյալ հիմնական մասնագետների ներգրավումը՝

- Չափագրող
- Գնահատող
- Գյուղատնտես
- Սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետ/դաշտային աշխատանքների մասնագետ
- Հարցազրուցավարներ (մարդահամարի և սոցիալ-տնտեսական հարցման անցկացման համար)

ՓԳՊ և ՀՕՏԸ աշխատանքների իրականացման հիմնական փորձագետների որակավորմանն առաջադրվող պահանջներն են՝

Չափագրող

Չափագրողը պետք է ունենա առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ և լիազոր պետական մարմնի կողմից ստացած որակավորման վկայական: Համանման ծրագրերում աշխատանքային փորձը պարտադիր է:

Գնահատող

Գնահատողը պետք է ունենա առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ, լիազոր պետական մարմնի կողմից ստացած որակավորման վկայական: Համանման ծրագրերում աշխատանքային փորձը պարտադիր է:

Գյուղատնտես

Գյուղատնտեսը պետք է ունենա մագիստրոսի աստիճան գյուղատնտեսության ոլորտում՝ առնվազն 10 տարվա մասնագիտական փորձով, համանման ծրագրերում աշխատանքային փորձը պարտադիր է:

Սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետ

Սոցիոլոգ/սոցիալական զարգացման մասնագետը պետք է ունենա բակալավրի աստիճան սոցիոլոգիայի կամ հարակից ոլորտներում, առնվազն 3 տարվա մասնագիտական կամ 5 տարվա աշխատանքային փորձով: Սոցիոլոգը պետք է ունենա համապատասխան աշխատանքային փորձ և մասնագիտական գիտելիքներ ՀՀ-ում հողերի օտարման, հողային, տեղական ինքնակառավարման, կադաստրային ոլորտների վերաբերյալ (Հողերի օտարմանը և տարաբնակեցմանը (ՀՕՏ) վերաբերվող փորձը, ներառյալ ՀՕՏԾ-երի պատրաստման և իրականացման ինստիտուտին և ԱԶԲ «Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը» (ADB SPS 2009) առնչվող գիտելիքների առկայությունը նախընտրելի է) և մասնագիտական գիտելիքներ և կարողություններ վերաբնակեցման ինստիտուտի վերաբերյալ:

ԻԿ-ը կարող է ներգրավել նաև այլ մասնագետների՝ ելնելով առաջադրանքի իրականացման պահանջներից:

4. Նախատեսվում է, որ ՀՕՏԾ-ների իրականացման համար կպահանջի 18 ամիս:

5. ԻԿ վճարումները հիմնված կլինեն ՀՕՏԾ 6 ենթահատվածների² հողերի օտարման իրականացման Եռամսյակային հաշվետվությունների (90%) և Ավարտական հաշվետվության (10%) հաստատման հիման

² Ենթահատվածները, ինչպես նաև յուրաքանչյուր միավորի համար վճարման մասը կորոշվի հաստատված ՀՕՏԾ իրականացման Մանրամասն Գործողությունների Պլանի (ՄԳՊ) միջոցով:

վրա, իսկ ՓԳՊ և ՀՕՏԾԼ աշխատանքների համար ԻԿ-ի վճարումը հիմնված կլինի օտարման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար կազմված Փոխհատուցման փաթեթի հանձնման վրա՝ ելնելով դրա միավոր արժեքից:

6.

Ընտրության մեթոդը՝	Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն (QCBS) (90/10):
Պայմանագրի տեսակը՝	Միանվագ
Առաջադրանքի տևողությունը՝	18 ամիս
Առաջադրանքի ակնկալվող մեկնարկը՝	հոկտեմբեր 2015թ.
Առաջադրանքի ակնկալվող ավարտը՝	ապրիլ 2017 թ.
Խորհրդատուի տեսակը՝	Ազգային

7. Հայտերի ներկայացում

Հետաքրքրվող մասնակիցները կարող են ներբեռնել հետաքրքրության հայտի, ինքնակենսագրականի ձևերը և ցանկացած այլ առնչվող տեղեկատվությունը (անվճար) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքից՝ www.northsouth.am: Հետաքրքրության հայտի և ինքնակենսագրականի ձևերը մասնակիցները կարող են ձեռք բերել նաև abrahamyank@northsouth.am և amirkhanyane@northsouth.am էլեկտրոնային հասցեներին ուղարկելով էլեկտրոնային նամակներ:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային և թղթային եղանակով՝ ոչ ուշ, քան 14 սեպտեմբերի 2015թ.-ը: